05.10.2017թ.

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի ուսուցիչներ և մանկավարժներ,
Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու կողմից ընդունեք շնորհավորանքներ Ձեր մասնագիտական տոնի առթիվ:
Հոկտեմբերի 5-ը հանրապետության պետական տոնացույցում ամրագրված է որպես Ուսուցչի օր, և յուրաքանչյուրի հոգում ակնածանք, խորին երախտագիտության զգացում կա «օրվա հերոսների» նկատմամբ:
Մեծ ուսուցչապետերից սկիզբ առած գիտության, իմացության և լույսի ճանապարհը շարունակում է իր անխորտակ ընթացքը նվիրյալ ու իրենց կոչմանը հավատարիմ մանկավարժների շնորհիվ:
Բոլոր ճանապարհներն անցնում են դպրոցով, և մեր պետության զարգացման ու առաջընթացի, վաղվա քաղաքացու կերտման բարդ ու դժվարին գործի պատասխանատուները հենց դուք եք և այն կատարում եք պատվով, պատասխանատվության մեծ զգացումով: Կրթական, դպրոցապահպան բարեփոխումներն էլ ձեր միջոցով և ձեր շնորհիվ են ստանում կյանքի ուղեգիր:
Առանձնակի սիրով ցանկանում եմ շնորհավորել մեր ավագ սերնդի մանկավարժներին, որոնք անցել են վաստակած հանգստի, սակայն իրենց ներկայությամբ, թողած ձեռագրով և կենսափորձով լավագույն օրինակ են երիտասարդ գործընկերների համար:
Մեր սկիզբը դպրոցն է ու նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունը. թե ինչպիսին կլինի վաղվա քաղաքացին, ինչ հասարակություն կունենանք, կանխորոշվում է հենց այստեղ, որովհետև մանկակրթման և դաստիարակման, հայապահպանման ու հայրենասիրության սերմանման բարդ ու պատվաբեր գործը վստահված է ուսուցիչներին ու դաստիարակներին:
Կրթության բնագավառի հարգարժան ներկայացուցիչներ
Անչափ գնահատելով ձեր վաստակն ու հայրենանվեր աշխատանքը՝ ևս մեկ անգամ շնորհավորում եմ այս գեղեցիկ տոնի առթիվ: Եղեք առողջ ու միշտ կենսախինդ: Թող լուսավոր ու արգասաբեր լինի ձեր մասնագիտական ուղին: Խաղաղություն և բարեկեցություն եմ մաղթում ձեզ և ձեր ընտանիքներին: